

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՏԻԳՐԱՆԻ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ

**ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՑՈՒՑՄԱՆԸ ԱՌԱՋԻՆ
ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ԺԲ.00.04 - «Դատական իրավունք՝ դատարանակազմություն,
քաղաքացիական դատավարություն, վարչական
դատավարություն, քրեական դատավարություն,
կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն,
փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական
գործունեության տեսություն» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЛУСИНЕ ТИГРАНОВНА ОГАНЕСЯН

**УЧАСТИЕ ЗАЩИТНИКА В ПРОЦЕССЕ ДОКАЗЫВАНИЯ В СУДЕ
ПЕРВОЙ ИНСТАНЦИИ**

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата юридических
наук по специальности 12.00.04 – Судебное право: судостроительство;
гражданский процесс; уголовный процесс; криминалистика; судебная
экспертиза; адвокатура; теория оперативно-розыскной деятельности.**

ЕРЕВАН 2026

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում
Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ Սերգեյի Ղազինյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Վահե Գուրգենի Ենգիբարյան
իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ
Գևորգ Սուրենի Բաղդասարյան
Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Արդարադատության ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի փետրվարի 24-ին ժ. 14³⁰-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունվարի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете
Научный руководитель: доктор юрид. наук, профессор
Гагик Сергеевич Казинян
Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор
Варг Гургенович Енгибарян
кандидат юрид. наук, ассистент
Геворг Суменович Багдасарян

Ведущая организация: **Академия Юстиции РА**

Защита состоится 24 февраля 2026 года в 14³⁰ часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 23 января 2026 года.

Ученый секретарь специализированного совета:
кандидат юридических наук, ассистент

Ж. А. Степанян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Մարդկության պատմության զարգացմանը զուգընթաց բնական երևույթների հետ մեկտեղ փոփոխությունների են ենթարկվել նաև հասարակական հարաբերությունները՝ ինչպես քանակական, այնպես էլ որակական տեսանկյունից: Այս որակական փոփոխություններից է նաև իրավական պետության գաղափարի իրականացումը, որի հիմնական նպատակներից մեկը հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունն ապահովելն է: Վերոնշյալի համատեքստում, որպես հիմնաքարային կարգավորում, խիստ կարևորվում է արդար դատաքննության իրավունքը: Արդար դատաքննության իրավունքն ամրագրված է թե՛ միջազգային, թե՛ ներպետական իրավական ակտերում, ինչն ընդգծում է դրա առանցքային դերը հասարակական հարաբերությունների զարգացման գործում:

Ուժը կորցրած Օրենսգրքի հետ համեմատությամբ՝ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը դատական քննության առնչությամբ սկզբունքորեն տարբեր մոտեցումներ է որդեգրել: Մասնավորապես՝ ոչ միայն առանձնացրել է դատաքննության երեք ինքնուրույն ենթափուլերը (նախնական, հիմնական և լրացուցիչ դատալուծմներ), այլև առաջին անգամ ՀՀ քրեադատավարական կարգավորումները առաջարկել են «պատենեշ»՝ քրեական արդարադատության իրականացման համար կենտրոնական նշանակություն ունեցող երկու հարցի՝ մեղավորության և պատժի միջև:

Եթե հիմնական դատալուծմները, թեպետ ոչ այդ եզրութաբանությամբ, սակայն բովանդակային իմաստով հայտնի էին և՛ տեսաբաններին, և՛ իրավակիրառողներին, ապա նախնական ու լրացուցիչ դատալուծմները նորույթ էին թե՛ ձևական, թե՛ բովանդակային տեսանկյունից: Ավելին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հիմքում օրենսդիրը դրել է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման հրամայականը: Որպես այդ հրամայականի գործնական իրացման միջոց՝ որոշակիորեն ընդլայնվել են վարույթի մասնավոր մասնակիցների իրավունքները և դատավարական հնարավորությունները:

Չնայած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում իրականացված բոլոր առանցքային փոփոխություններին՝ կարծում ենք, որ ապացուցմանն առնչվող հիմնահարցերը շարունակում են պահպանել իրենց կենտրոնական նշանակությունը: Դատավարական կառուցվածքային փոփոխությունները

հանգեցրել են նաև դատական քննության փուլում ապացուցման գործընթացի վերափոխմանը, միաժամանակ, և՛ օրենսդրական, և՛ կառուցակարգային, և՛ գործնական-կիրառական տեսանկյուններից:

Վերոգրյալի համատեքստում հարկ է ուսումնասիրել առաջին ատյանի դատարանում ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության հարցը՝ վերհանելով այն սկզբունքային փոփոխությունները, որոնք տեղ են գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Առանձին կարևորություն և արդիականություն ունի նաև դատական քննության յուրաքանչյուր ենթափուլին անդրադառնալը՝ դրանք վերլուծելով հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման, ինչպես նաև Օրենսգրքի հիմքում դրված նոր փիլիսոփայության համատեքստում:

Թեպետ, ճշմարիտ է պնդումը, որ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որդեգրել է մի շարք առաջադիմական մոտեցումներ, այդ թվում՝ առաջին ատյանի դատարանում իրականացվող դատաքննության համատեքստում, կարծում ենք, որ այն գուրկ է օրենսդրական թերություններից, որոնց շտկումը կնպաստի հոչակված հայեցակարգային մոտեցումների լիարժեք կենսագործմանը: Վերոնշյալ խնդիրները վերաբերում են, մասնավորապես, նախնական դատախոսների փուլում միջնորդությունների քննությանը և լուծմանը, պարզաբանված մեղադրանք ունենալու իրավունքին, նոր ապացույցներ ներկայացնելուն, մեղավորության և պատժի հարցերի միջև առաջարկվող դատավարական «պատնեշի» ամրապնդմանը և այլն:

Նկատելի է, որ հարցերի այն շրջանակը, որտեղ հետազոտության իրականացման արդյունքում վեր են հանվել թերությունները, ուղղակիորեն փոխկապակցված են արդար դատաքննության իրավունքին, որոշակիորեն դրանից ածանցվող պաշտպանության իրավունքին, մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքին, ինչպես նաև մի շարք այլ ղեկավարելակետային դրույթների՝ քրեադատավարական օրենսդրության շրջանակում:

Ստեղծված իրավիճակի շտկման ուղիներից մեկը գիտական հիմնավորում ունեցող առաջարկների վրա հիմնված համապատասխան օրենսդրական փոփոխություններն են, ուստի քննարկվող ոլորտում գիտական հետազոտությունների անհրաժեշտությունն ունի օբյեկտիվ հրատապություն: Ավելին՝ նշված օբյեկտիվ հրատապությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ արդարադատության իրականացման արդյունքում լուծվում են մարդկային ճակատագրերին

առնչվող հարցեր, և նման պայմաններում գիտական հիմնավորվածություն ունեցող ուղենիշներն անհրաժեշտություն են:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Հետազոտության նպատակն է վերհանել, պարզաբանել և առաջարկել տեսագործական լուծումներ՝ չեզոքացնելու ներպետական օրենսդրության մեջ առկա բացերը, բացահայտել առաջին ատյանի դատարանում ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության ընթացքում առաջացող խնդիրները, ներկայացնել դրանց լուծմանն ուղղված հստակ առաջարկներ:

Նշված նպատակին հասնելու համար **խնդիր** է դրվել.

- բացահայտել պաշտպանության իրավունքի տեղը և դերը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված սկզբունքների շրջանակում,
- բացահայտել այն դատավարական առանձնահատկությունները, որոնցով օժտված է պաշտպանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի շրջանակում՝ անդրադառնալով ոչ միայն քրեադատավարական, այլև պաշտպանների նկատմամբ պարտադիր կիրառելիություն ունեցող էթիկական նորմերին,
- ուսումնասիրել ապացուցման կառուցակարգի և պաշտպանին տրամադրվող դատավարական երաշխիքների հարաբերակցությունը,
- ուսումնասիրել պաշտպանի մասնակցության առանձնահատկությունները նախնական, հիմնական և լրացուցիչ դատալսումներին,
- ուսումնասիրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված ապացուցման գործընթացի սկզբունքորեն նոր կարգավորումները՝ առաջին ատյանի դատարանում դատաքննության յուրաքանչյուր ենթափուլում և պաշտպանի մասնակցությունը դրանց,
- վերհանել այն խնդրահարույց կարգավորումները, որոնք գործնականում խոչընդոտում են պաշտպանի արդյունավետ մասնակցությանը ապացուցմանը առաջին ատյանի դատարանում,
- առանձնացնել առաջին ատյանի դատարանում ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության առնչությամբ օրենսդրական թերությունները՝ առաջարկելով դրանց վերացմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը առաջին ատյանի դատարանում ապացուցման գործընթացին պաշտպանի

մասնակցության համալիր ուսումնասիրությունն է՝ որպես վարույթի մասնավոր մասնակիցների իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավորման, պաշտպանության իրավունքի արդյունավետ և գործնական իրացման միջոց: Հետազոտության առարկան են պաշտպանության իրավունքը՝ որպես որոշակի ինքնավարությամբ օժտված սկզբունք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համատեքստում, առաջին ատյանի դատարանում դատաքննության երեք ենթափուլերը կազմող նախնական դատալսումները, հիմնական դատալսումները և լրացուցիչ դատալսումները՝ դրանցում ուրվագծվող ապացուցման գործընթացի, դրա բնորոշ հատկանիշների և պաշտպանի՝ այդ գործընթացին մասնակցության հորիզոնների բացահայտմամբ: Հետազոտության առարկայի անբաժան մասն են կազմում նաև ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը և այն միջազգային-իրավական ակտերը, որոնք սահմանում են պաշտպանության իրավունքը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Առաջին ատյանի դատարանում դատաքննության ժամանակ ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները լուսաբանվել են ճանաչված գիտնականներ Յան Լանգֆորդի, Դեյվիդ Բրոդիի, Ջեֆֆրի Լեհմանի, Ջոշուա Դրեսսլերի, Մ. Դամասկայի և այլոց կողմից:

Քննարկվող ինստիտուտի զարգացման գործում մեծ ներդրում են ունեցել նաև այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են՝ Ա. Գ. Տոբյանիկովը, Ս. Ա. Գավրիլովը, Պ. Ա. Լուպինսկայան, Ա. Յու. Գորդենը, Ս. Ա. Ֆրոլովը, Գ. Տ. Սուխունկալովը և այլք:

Ինչ վերաբերում է հայրենական գիտական գրականությանը, ապա հարկ է նշել, որ թեև ընտրված թեմայի որոշ բաղկացուցիչներ (օրինակ՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռում, պաշտպանության իրավունք, մրցակցության և կողմերի հավասարության սկզբունք, նախնական դատալսումներ) հանդիսացել են այնպիսի տեսաբանների ուշադրության առարկա, ինչպիսիք են՝ Գ. Ղազինյանը, Ս. Դիլբանդյանը, Դ. Մելքոնյանը, Հ. Ղուկասյանը, սակայն վերջիններիս աշխատությունները նպատակ չեն հետապնդել համապարփակ կերպով քննարկել պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը՝ դատաքննության փուլում առաջին ատյանի դատարանում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ դատական քննության փուլում

ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցությանն առնչվող մի շարք հարցեր շարունակում են մնալ չուսումնասիրված: Դրանք գործող քրեադատավարական կարգավորումների համատեքստում համակողմանիորեն ուսումնասիրված չեն, ինչի հետևանքով քննարկվող ինստիտուտի գործնական կիրառման ընթացքում առաջանում են մի շարք արդիական խնդիրներ, որոնք երբեմն հանգեցնում են անձանց իրավունքների և հիմնարար ազատությունների խախտումների:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը կազմել են պաշտպանության իրավունքի շուրջ ձևավորված դատական պրակտիկան, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, իրավակիրառ պրակտիկան և դոկտրինալ աղբյուրները:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը:

Պայմանավորված հետազոտության նպատակով և խնդիրներով՝ այն իրականացվել է համընդհանուր, համատեսական և մասնագիտական մեթոդների զուգակցման միջոցով: Որպես համընդհանուր սկզբունք է ընդունվել դիալեկտիկական մեթոդաբանական հիմքը, համատեսական սկզբունքների ցանկում են՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, վերլուծության և սինթեզի ձևական-տրամաբանական սկզբունքները, կիրառվել են նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և իրավահամեմատական մեթոդները:

Հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ հանդիսանում է առաջին գիտական համալիր հետազոտությունը՝ նվիրված առաջին ատյանի դատարանում՝ դատաքննության փուլում, պաշտպանի մասնակցությանն ապացուցմանը: Աշխատանքում փորձ է արվել բազմակողմանի վերլուծել դատական պրակտիկայում արդեն իսկ առաջացող և առաջացման տեսագործական հավանականություն ունեցող խնդիրները, ինչպես նաև ներկայացնել դրանց լուծման հնարավոր տարբերակները: Աշխատանքի նորույթը պայմանավորված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում դատաքննության փուլի վերափմաստավորմամբ: Թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային նորույթները, որոնք ներառվեցին գործող օրենսդրության շրջանակում, առաջ բերեցին անհրաժեշտություն քննարկել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռումը՝ այդ թվում պաշտպանության իրավունքի ամբողջական իրացման դիտանկյունից:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Պաշտպանը քրեադատավարական ինքնուրույնություն ունեցող սուբյեկտ է, որի կողմից արդյունավետ պաշտպանության իրականացումը ուղղակիորեն փոխկապակցված է վերջինիս անկախության և ինքնուրույնության հետ: Ընդ որում՝ անկախություն և ինքնուրույնություն ոչ միայն հանրային իշխանության ներկայացուցիչներից, այլև՝ հասարակական կարծիքից և, որ ամենակարևորն է, վստահորդի կամքից: Եթե մեղքի ու մեղավորությանն առնչվող հարցերում՝ անկախ ապացուցման գործընթացի համար դրանց նշանակությունից, պաշտպանը չի կարող հայտնել մեղադրյալի դիրքորոշումից տարբերվող դիրքորոշում, ապա իրավիճակն այլ է զուտ իրավական բնույթ ունեցող հարցերի պարագայում: Կատարված հետազոտության արդյունքում փաստվել է, որ պաշտպանի և մեղադրյալի դիրքորոշումների միջև կարող է առկա լինել հակասություն իրավունքի հարցերի շուրջ: Զուտ իրավական բնույթ ունեցող հարցերի շուրջ, օրինակ՝ իրավական փաստարկների կամ հակափաստարկների ներկայացման ժամանակ, պաշտպանը պետք է իրավասու լինի ներկայացնել մեղադրյալի դիրքորոշումից տարբերվող դիրքորոշում, եթե բացառում է ողջամիտ հավանականությունը, որ նման կարծիքի արտահայտումը ապացուցման գործընթացում կարող է վնասել մեղադրյալի շահին:

2. Դատաքնության փուլում պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը ոչ միայն ենթադրում է վարույթն իրականացնող մարմնի կողմից պոզիտիվ և նեգատիվ պարտականությունների կատարում՝ հնարավոր դարձնելով արդյունավետ մասնակցությունը, այլև պետք է ենթադրի անհատ փաստաբանի կողմից համարժեք աշխատանք, որը դրսևորվում է ռեսուրսների և ռիսկերի գնահատմամբ, էթիկական չափորոշիչների «ներքին կողմնացույցի» առկայությամբ, պաշտպանության ստանձնման և պատշաճ ներկայացուցչության իրականացման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությամբ, այդ թվում՝ բավարար մարդկային ռեսուրսներ, գրասենյակային միջոցներ, արդեն իսկ ստանձնած վարույթների հետ «բախումների» բացակայություն: Այս համատեքստում անձի պաշտպանությունը ստանձնելու համար սահմանված որակավորման առկայությունը անհրաժեշտ, սակայն ոչ բավարար նախապայման է: Առաջարկվում է լրացում կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ ուղղակիորեն ամրագրելով պաշտպանի պարտականությունը՝ նախքան պաշտպանության ստանձնումը հավաստիանալ անհրաժեշտ կազմակերպչական և բովանդակային ռեսուրսների առկայության հարցում:

Հաշվի առնելով իրադրության փոփոխության հնարավորությունը՝ առաջարկվող օրենսդրական կարգավորումը պետք է նախատեսի նաև պաշտպանի պարտականությունը՝ տեղեկացնել վստահորդին հանգամանքների փոփոխության մասին:

3. Հետազոտության շրջանակում արձանագրվել է, որ դատաքննության փուլում պաշտպանի մասնակցությունն ապացուցմանը կարող է որոշիչ նշանակություն ունենալ անձի իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հարցում: Հաշվի առնելով ապացուցման գործընթացի կարևոր նշանակությունը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է երաշխավորել մեղադրյալի իրավունքների պատշաճ իրացումը ոչ միայն պաշտպանի ներգրավման փուլում, այլև վերջինիս՝ վարույթին մասնակցության դադարեցման դեպքում, հատկապես՝ փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի լուծման դեպքում: Կարծում ենք, առաջին հերթին, պաշտպանը պետք է տեղեկացնի վստահորդին՝ ներկայացնելով հիմքերը և ձեռնամուխ լինելով փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի լուծմանը: Այնուամենայնիվ, քանի որ վարույթն իրականացնող մարմինը չունի պարտականություն կամ հնարավորություն ծանոթ լինելու փաստաբանի և վստահորդի միջև առկա պայմանագրային հարաբերություններին, անհրաժեշտություն է առաջանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը լրացնել հետևյալ կերպ՝ «1. Պաշտպանը դադարում է որպես այդպիսին մասնակցել քրեական վարույթին, եթե (...) 5) օրենքով նախատեսված դեպքերում փաստաբանական ծառայությունների մատուցման դադարեցման մասին ծանուցել է վարույթն իրականացնող մարմնին»: Հակառակ դեպքում՝ կոնկրետ վարույթի շրջանակում, իր իսկ լիազորությունների դադարեցման կապակցությամբ, պաշտպանը հայտնվում է որոշակիորեն կրավորական դիրքում՝ վտանգի տակ դնելով նաև նախկին վստահորդի շահերը:

4. Գործնականում մեղադրանքը հաճախ կարող է ներկայացված լինել ընդհանրական և լայն կերպով, մինչդեռ պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը դատաքննության փուլում կարող է լինել արդյունավետ այն դեպքում, երբ առկա է հստակ և պարզաբանված մեղադրանք: Գտնում ենք, որ մեղադրանքի պարզաբանումը չի կարող հավասարեցվել միայն մեղադրանքի տեքստի մեխանիկական վերընթերցմանը և ենթադրում է ակտիվ հարց ու պատասխան, որի իրացման համար դատավարական գործիքակազմով «զինված» լավագույն հարթակը նախնական

դատալսումներն են: Այս խնդրի վերաբերյալ օրենսդրական կարգավորումների բացակայության հետևանքով ձևավորվում է խայտաբղետ, հաճախ հակասական իրավակիրառ պրակտիկա: Հետևաբար՝ նպատակ ունենալով բացառել խայտաբղետ դատական պրակտիկայի ձևավորումը, կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածը անհրաժեշտ է լրացնել դրա 1-ին մասի 7-րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ. «1. Նախնական դատալսումների ընթացքում սույն հոդվածով սահմանված հաջորդականությամբ դատարանը քննարկման առարկա է դարձնում» (...) 7. Միջնորդության դեպքում՝ մեղադրանքի պարզաբանման հարցը»:

5. Կատարված հետազոտության արդյունքում առաջարկվում է իրականացնել նախնական դատալսումների փուլում ներկայացված միջնորդությունների քննություն և լուծում՝ առանց հետաձգման հնարավորության: Նախնական դատալսումների փուլում ներկայացված միջնորդությունը նպատակ է հետապնդում ոչ միայն լուծել բարձրացրած հարցը, այլև ապահովել հարցի լուծումը հնարավորինս վաղ փուլում՝ ելնելով դատաքննության եռաթև տրամաբանությունից: Պայմանավորված յուրաքանչյուր փուլի հայեցակարգային նպատակներով՝ միջնորդության բավարարումը կամ մերժումը նախնական, հիմնական և լրացուցիչ դատալսումների փուլում չեն նույնանում: Հետևաբար՝ այն դեպքերում, երբ միջնորդությունը չի կարող լուծվել նախնական դատալսումների փուլում, այն ենթակա է մերժման: Ենթադրվում է՝ միջնորդությունը ներկայացվել է՝ հաշվի առնելով հենց նախնական դատալսումների դատավարական առանձնահատկությունները: Նկատի ունենալով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ և 311-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություններ՝ նախատեսելով ներկայացված միջնորդությունների լուծման կառուցակարգ: Այսպես՝ կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը ենթակա է լրացման հետևյալ ձևակերպմամբ՝ «Միջնորդության լուծումը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կարող է հետաձգվել մինչև միջնորդության վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար էական հանգամանքների պարզումը, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»:

Միաժամանակ, անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հարցի կապակցությամբ կողմի միջնորդության լուծումը

հետաձգման ենթակա չէ»:

6. Իրականացված հետազոտության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել նախնական դատախոսների վերաբերյալ օրենսդրական կարգավորումը լրացնել այնպիսի դրույթով, որն ուղղակիորեն կնախատեսի նախնական դատախոսների փուլում նոր ապացույցների ներկայացում: Թեպետ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 321-րդ հոդվածը թույլ է տալիս նախնական դատախոսներում քննարկման առարկա դարձնել «այլ վերաբերելի հարցեր», կարծում ենք, որ ապացույցների և ապացուցման մասին հարցերը, հիմք ընդունելով դրանց կարևորությունը, պետք է ուղղակիորեն ամրագրվեն որպես ինքնուրույն դրույթներ: Նշվածը հիմնավորվում է նաև նրանով, որ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի շրջանակում նախատեսել է ցանկ՝ ապացույցներին և ապացուցմանը վերաբերող հարցերին ուղղված: Հետևաբար՝ նոր ապացույցի ներկայացման հնարավորությունը ևս պետք է սահմանված լինի ուղղակիորեն: Այս դրույթի սահմանումը թույլ կտա արագ կերպով արձագանքել առաջացող դատավարական անհրաժեշտությանը և երաշխավորել մեղադրյալի իրավունքների պաշտպանությունը՝ բացառելով ապացույցների ոչնչացման, կորստի կամ այլ կերպ վնասվելու հնարավորությունը, նախքան պաշտպանության կողմը կստանա դատավարական հնարավորություն դրանք դատարանին ներկայացնելու:

7. Իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ լրացուցիչ դատախոսները՝ որպես դատավարական փուլ, ունեն որոշակիորեն ինքնավար ապացուցման առարկա, որը պետք է վերաբերի բացառապես պատժի և պատասխանատվության (կամ՝ ռեաբիլիտացիայի) հարցերին՝ դուրս թողնելով մեղքի և մեղավորության վերաբերյալ հանգամանքները: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում արդեն իսկ ամրագրված է նման տարանջատման ընդհանուր տրամաբանությունը, գործնականում հիմնական և լրացուցիչ դատաքննության միջև շարունակում է պահպանվել դատավարական «պատնեշի» թուլության վտանգը: Մասնավորապես՝ անձի բնութագրին ու պատժի անհատականացմանը վերաբերող ապացույցների վաղաժամ բացահայտումը կարող է նախապես ազդել դատարանի ներքին համոզմունքի ձևավորման վրա մեղքի հարցերով: Այս նպատակով անհրաժեշտ ենք համարում օրենսդրական նոր մեխանիզմի ամրագրումը: Այն կերաշխավորի, որ մեղքի և մեղավորության հետ կապված ապացույցները, ինչպես նաև անձի բնութագրին, պատժի չափին ու

տեսակին և հնարավոր ռեաբիլիտացիոն միջոցներին վերաբերող ապացույցները դատարանին ներկայացվեն ու դատարանի կողմից քննվեն տարբեր դատավարական փուլերում՝ առանց փոխներթափանցման: Նման մեխանիզմ կարող է, ի թիվս այլոց, լինել «երկու ծրարների» համակարգը, երբ մեղքի և մեղավորության հանգամանքների վերաբերյալ ապացույցներն ամփոփվում են մեկ ծրարում, իսկ անձի բնութագրի և պատժի անհատականացմանն առնչվող ապացույցները՝ մյուսում: Վերջինս բացվում ու դատարանին հասանելի է դառնում միայն լրացուցիչ դատալսումների փուլում: Այսպիսով՝ կձևավորվի ավելի հստակ «սահմանագիծ» հիմնական և լրացուցիչ դատաքննության փուլերում ապացուցվող հանգամանքների միջև և կնվազեցվի հակավածության վտանգը մեղքի հարցերի լուծման փուլում:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության արդյունքները կարող են կարևոր ներդրում ունենալ հայրենական իրավական համակարգում՝ առաջին ատյանի դատարանում ապացուցման գործընթացին պաշտպանի գործուն մասնակցության երաշխավորման զարգացման հարցում, ինչպես նաև հիմք հանդիսանալ ոլորտում ապագայում կատարվելիք այլ հետազոտությունների համար: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել գործող կարգավորումներում համապատասխան փոփոխություններ կատարելիս և նոր օրենսդրական կարգավորումների պրակտիկ կիրառման գործընթացում:

Հաշվի առնելով, որ ատենախոսության թիրախում են գտնվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սկզբունքների գլխում զետեղված պաշտպանության իրավունքը, այն կարող է կիրառվել նաև մասնագետների վերապատրաստման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնում: Աշխատանքի հիմնական դրույթները և հետազոտության արդյունքները իրենց արտացոլումն են գտել հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել գիտական ժողովածուներում և ամսագրերում: Հետազոտության թեմային վերաբերող առանձին հարցեր և հիմնախնդիրներ ներկայացվել են ատենախոսի զեկույցներում և հաղորդումներում՝ ինչպես ներպետական և միջազգային գիտաժողովների, այնպես էլ Երևանի պետական համալսարանի իրավագիտության

Ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի կողմից կազմակերպված մասնագիտական քննարկումների ընթացքում: Ատենախոսը, հանդիսանալով ՀՀ փաստաբանների պալատի անդամ, մի շարք առաջարկություններ կիրառել է վստահորդների դատական պաշտպանության իրականացման շրջանակում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, դրանցում ընդգրկված 8 պարագրաֆից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության՝ «Պաշտպանի գործունեության տեսական և իրավական հիմքերը քրեական դատավարությունում» վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երեք պարագրաֆից:

«Պաշտպանության իրավունքի հասկացությունը, դերը և նշանակությունը» վերտառությամբ 1.1 պարագրաֆում ներկայացվել և վերլուծվել են պաշտպանության իրավունքի վերաբերյալ տեսության մեջ գոյություն ունեցող բնորոշումները, հստակեցվել է դրա դրսևորման առանձնահատկությունները, տեղը և դերը քրեադատավարական սկզբունքների ցանկում:

«Պաշտպանի դատավարական կարգավիճակի առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ 1.2 պարագրաֆում քննարկվել է պաշտպանը՝ որպես քրեադատավարական սուբյեկտ: Այս համատեքստում կարևորվել են պաշտպանի կարգավիճակի դատավարական առանձնահատկությունները, որոնք թույլ են տալիս վերջինիս բնութագրել ոչ միայն որպես ներկայացուցիչ, այլև որոշակի ինքնավարությամբ օժտված սուբյեկտ:

«Պաշտպանի անկախությունը և ինքնուրույնությունը՝ որպես արդյունավետ պաշտպանության իրականացման նախապայման» վերտառությամբ 1.3 պարագրաֆում քննարկվել են պաշտպանի գործունեության այնպիսի կարևոր նախապայմաններ, ինչպիսիք են

անկախությունը և ինքնուրույնությունը՝ դրանք դիտարկելով ոչ միայն որպես ինքնուրույնություն և անկախություն վարույթն իրականացնող մարմնից, այլև հանրային կարծիքից և վստահորդից: Հետազոտության արդյունքում փաստվել է, որ արդյունավետ պաշտպանությունը հնարավոր է անկախ և ինքնուրույն պաշտպանի ակտիվ ներգրավվածության պարագայում, ով պատասխանատու է և՛ որակյալ պաշտպանության անմիջական իրականացման, և՛ կազմակերպչական գործընթացի ապահովման համար: Այս համատեքստում ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

Երկրորդ գլուխը՝ «Ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության դատավարական հիմքերը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

«Ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության աստիճանը՝ որպես դատավարական ձևը կանխորոշող առանցքային գործոն» վերտառությամբ 2.1 պարագրաֆում բացահայտվել է ապացուցմանը պաշտպանի մասնակցության կարևորությունը, դրա բնույթը, ինչպես նաև հարաբերակցությունը դատավարության ձևի հետ: Վերլուծվել է պաշտպանի ապացուցմանը մասնակցելու *իրավունքը*՝ վստահորդի իրավունքների և իրավաչափ շահերի լավագույն ներկայացման համատեքստում: Կարևոր նշանակություն ունի ոչ միայն մասնակցությունն ինքնին, այլև նման իրավական հնարավորության առկայությունը և պաշտպանի հայեցողությամբ դատավարության որևէ փուլում ապացուցմանը մասնակցելը: Իրականացված հետազոտության արդյունքում փաստվել է, որ ապացուցմանը մասնակցելիս պաշտպանի համար անպայմանորեն ուղենիշային են ոչ միայն նորմատիվ իրավական ակտերը, այլև համընդհանուր բարոյական և էթիկական սկզբունքները: Ներկայացվել են նաև համապատասխան առաջարկներ:

«Ապացուցման գործընթացի դատավարական կարգավորումը՝ որպես պաշտպանի ձեռք բերած ապացույցների թույլատրելիության ապահովման երաշխիք» վերտառությամբ 2.2 պարագրաֆում ուսումնասիրվել են ՀՀ քրեական դատավարության գործող և ուժը կորցրած կարգավորումները պաշտպանի՝ ապացուցմանը մասնակցելու համատեքստում: Քննարկվել է պարզաբանված մեղադրանքի կարևորությունը ապացուցման գործընթացի դատավարական կարգավորումների համատեքստում, այն հիմնավորմամբ, որ պարզաբանված մեղադրանքի բացակայության պայմաններում, եթե անգամ

պաշտպանի կողմից ներկայացված ապացույցները դիտարկվեն որպես թույլատրելի, էականորեն նվազում է դրանց հնարավոր արդյունավետությունը: Հաշվի առնելով կատարված վերլուծությունները և հիմնավորումները, ինչպես նաև նպատակ ունենալով բացառել խայտաբղետ դատական պրակտիկայի ձևավորումը, ներկայացվել են օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկներ:

Երրորդ գլուխը՝ «Պաշտպանի՝ առաջին ատյանի դատարանում ապացուցմանը մասնակցության քրեադատավարական հիմքերը և տակտիկական հնարքները» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆից:

«Պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը նախնական դատալուծման փուլում» վերտառությամբ 3.1 պարագրաֆում անդրադարձ է կատարվել նորույթ հանդիսացող նախնական դատալուծման կառուցակարգին՝ քննարկելով պաշտպանի արդյունավետ մասնակցության հնարավորությունը: Նախնական դատալուծման պաշտպանի արդյունավետ մասնակցության առնչությամբ կատարվել են եզրահանգումներ՝ ուսումնասիրելով միջնորդությունների քննարկումը և լուծումը, նոր ապացույցների ներկայացման հնարավորությունը, ինչպես նաև այլ հայեցակարգային մոտեցումները: Ելնելով նախնական դատալուծման առանձնահատկություններից՝ առաջարկվել է բացառել ներկայացվող միջնորդությունների լուծման հետաձգումը, ինչպես նաև միջնորդության առկայության դեպքում ապահովել նոր ապացույցների ներկայացման հնարավորությունը:

«Պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը հիմնական դատալուծման փուլում» վերտառությամբ 3.2 պարագրաֆում վերլուծվել է հիմնական դատալուծման կառուցակարգը՝ արձանագրելով, որ, ի տարբերություն նախնական և լրացուցիչ դատալուծման, հիմնական դատալուծման, թեպետ ոչ այդ եզրութաբանությամբ, ծանոթ փուլ են հանդիսանում հայրենական քրեադատավարական համակարգում: Հիմնական դատալուծման ուսումնասիրության համատեքստում քննարկման առարկա են դարձել այն օրենսդրական գործիքները և միջոցները, որոնք հնարավոր են դարձնում պաշտպանի արդյունավետ մասնակցությունը: Ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

«Պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը լրացուցիչ դատալուծման փուլում» վերտառությամբ 3.3 պարագրաֆում վերլուծվել

է լրացուցիչ դատալսումների փուլը՝ որպես նորույթ ՀՀ քրեական դատավարությունում: Վերլուծության ընթացքում հիմնավորվել է, որ լրացուցիչ դատալսումների փուլը, թեև առավել բնութագրական է անգլոսաքսոնական իրավական ընտանիքի պետություններին, քրեադատավարական տեսության զարգացման արդի միտումները արձանագրում են, որ մայրցամաքային և անգլոսաքսոնական իրավական ընտանիքների բնութագրական գծերը չի կարելի դիտարկել խիստ միանշանակ: Այլ կերպ՝ նկատվում է իրավական ընտանիքներին բնորոշ հատկանիշների փոխներթափանցման միտում: Արձանագրվել է, որ լրացուցիչ դատալսումների փուլը դրական նորույթ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Հաշվի առնելով լրացուցիչ դատալսումների հայեցակարգային նպատակները՝ ներկայացվել են առաջարկներ, որոնք միտված են առավել ամրապնդելու դատավարական այս նոր փուլը՝ այդ թվում՝ պաշտպանի արդյունավետ մասնակցությունը ապահովելու եղանակով:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները:

1. Պաշտպանության իրավունքը մեղադրյալին վերապահված իրավունքների ցանկում ունի առանցքային նշանակություն: Ըստ էության՝ այն մեղադրյալի գործիքակազմում առկա հիմնական զենքն է՝ դիմակայելու հանրային իշխանության կողմից նախաձեռնվող և իրականացվող քրեական վարույթին ու հետապնդմանը: Պաշտպանության իրավունքը կարևորվում է ոչ այնքան որպես հռչակագրային իրավունք, այլ որպես իրական մեխանիզմ՝ հնարավորություն տալով մեղադրյալին դատական քննության փուլում ակտիվ մասնակցություն ունենալ ապացուցման գործընթացին:

2. Պաշտպանի՝ ապացուցմանը արդյունավետ մասնակցության համատեքստում կարևորում ենք պաշտպանության կողմի՝ պարզաբանված մեղադրանք ունենալու իրավունքի իրացումը: Հակառակ դեպքում՝ անկախ գործընթացի մրցակցայնությունից, պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը դառնում է բովանդակազուրկ: Պարզաբանված մեղադրանք ունենալու իրավունքը, մեր կարծիքով, նշանակում է՝ պարզաբանված է մեղադրանքի թե՛ իրավական, թե՛ փաստական կողմը այնպիսի հասկանալի եղանակով, որը թույլ կտա մեղադրյալին ունենալ ամբողջական պատկերացում: Այս առնչությամբ առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածում կատարել համապատասխան լրացում, որը թույլ կտա միջնորդության առկայության

դեպքում ստանալ մեղադրանքի առնչությամբ պարզաբանում:

3. Թեև հիմնական կանոնն այն է, որ պաշտպանի և մեղադրյալի դիրքորոշումները համընկնում են, կատարված ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել, որ հնարավոր են նաև հակասություններ: Մեր կարծիքով, երբ հակասությունը վերաբերում է բացառապես իրավական փաստարկի ներկայացմանը, և պաշտպանը վստահ է, որ դրա ներկայացումը որևէ կերպ չի կարող վնասել մեղադրյալի շահերին, ապա կարող է առավելություն տրվել պաշտպանի դիրքորոշմանը՝ հաշվի առնելով մասնագիտական ազատության շրջանակը և մասնագիտական փորձառությունը:

4. Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ դատաքննության փուլում պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը ոչ միայն ենթադրում է վարույթն իրականացնող մարմնի կողմից պոզիտիվ և նեգատիվ պարտականությունների կատարում՝ փոխկապակցվելով միայն այլ սուբյեկտների գործողությունների կամ անգործության հետ, այլև պետք է ենթադրի համամասն աշխատանք կոնկրետ, անհատ փաստաբանի կողմից: Հետևաբար, «ներքին կողմնացույցով» գնահատելով ապացուցմանը մասնակցելու հնարավորությունը, կարծում ենք, որ անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված դրույթ, որը միաժամանակ հնարավորություն կտա պաշտպանին իրականացնել և՛ ինքնուրույն գնահատում, և՛ հաղորդակցվել պաշտպանյալի հետ:

5. Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է նաև պաշտպանի՝ վարույթին մասնակցության դադարեցումը՝ փաստաբանական ծառայության մատուցման պայմանագրի լուծման հիմքով՝ հատկապես ապացուցմանը մասնակցելու շրջանակում: Այստեղ առկա է գործնական վտանգ առ այն, որ վարույթն իրականացնող մարմինը, ծանուցված չլինելով փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի դադարեցման մասին, չի կարողանա երաշխավորել պաշտպանի գործուն մասնակցությունը ապացուցմանը: Հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը լրացնել նման պարտականություն սահմանող դրույթով:

6. Պաշտպանի՝ դատաքննության ընթացքում ապացուցմանը մասնակցելու համատեքստում հաջորդ եզրահանգումն այն է, որ նախնական դատախոսների փուլում ներկայացվող միջնորդությունները, այդ թվում և հատկապես ապացույցի թույլատրելիության վիճարկման վերաբերյալ, պետք է ոչ միայն քննարկվեն, այլև լուծվեն հենց այս դատավարական փուլում:

Կարծում ենք, որ նախնական դատալսումների փուլում ներկայացված միջնորդությունների քննարկումը հետաձգման ենթակա չէ: Ընդ որում՝ միջնորդության լուծումը ամենևին չի նշանակում դրա պարտադիր բավարարում: Եթե դատարանը եզրահանգում է, որ անհրաժեշտ է պարզել լրացուցիչ փաստեր, հետազոտել այլ ապացույցներ կամ կատարել նախնական դատալսումների փուլում չներառված գործողություններ միջնորդության լուծման համար, ապա այն ենթակա է մերժման: Նշված եզրակացությունը պայմանավորված է նախնական դատալսումների դատավարական նշանակությամբ, տրամաբանությամբ և փիլիսոփայությամբ: Նախնական դատալսումների փուլում ներկայացվող ցանկացած միջնորդություն ուղղակիորեն փոխկապակցված է այս փուլի առանձնահատկությունների և տրամաբանության հետ:

7. Նախնական դատալսումների փուլում պաշտպանության կողմը պետք է իրավունք ունենա ներկայացնել նոր ապացույցներ: Հակառակ դեպքում կարող է առաջանալ իրավիճակ, երբ առկա լինի ապացույցի վնասման, ոչնչացման կամ կորստի վտանգ, և դատավարական կառուցակարգի բացակայության պայմաններում նոր ապացույցները կարող են չներառվել գործի նյութերում՝ անհամաչափորեն սահմանափակելով դատական քննության փուլում պաշտպանի մասնակցությունը: Կարծում ենք նաև, որ նման իրավունքի կամայական իրացումը բացառելու նպատակով, այն ոչ թե քննարկման առարկա պետք է դառնա «այլ վերաբերելի հարցերի» շրջանակում, այլ ուղղակիորեն ամրագրված լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածում նույն կերպ, ինչպես ապացուցման գործընթացին առնչվող մյուս գործողությունները:

8. Հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ թեպետ այս փուլը չի ունեցել «հիմնական դատալսումներ» անվանումը, սակայն այն նորույթ չէ ՀՀ քրեադատավարական համակարգում: Հիմնական դատալսումների ընթացքում է տեղի ունենում ապացուցման բուն գործընթացը: Այս փուլում պաշտպանը ևս ակտիվ մասնակցություն պետք է ունենա ապացուցմանը: Այս շրջանակում, կարևորում ենք բացման խոսքի ընթացքում նախնական հասցեական անդրադարձը հետազոտվելիք ապացույցների ծավալին: Հիմնական դատալսումների փուլում պաշտպանի գործիքակազմում առկա հիմնական միջոցներից է նաև եզրափակիչ ելույթը կամ պաշտպանական ճառը: Անցած լինելով ապացույցների հետազոտման փուլը՝ մեղավորության հարցի լուծման համատեքստում պաշտպանը պետք է պատշաճ կերպով նախապատրաստված լինի եզրափակիչ ելույթի ընթացքում դիրքորոշում

ներկայացնելու համար: Չնայած օրենսդրական պահանջի բացակայությանը՝ պաշտպանը հնարավորություն ունի դատարանի հետ կիսվելու եզրափակիչ ելույթի գրավոր տարբերակով, ինչը կարող է արդյունավետ գործիք հանդիսանալ՝ լուծող մարմնին միասնական փաստաթղթի տեսքով տրամադրելով պաշտպանի վերլուծությունները ապացուցման առնչությամբ:

9. Լրացուցիչ դատալսումների ներառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, ըստ էության, նշանակում է, որ օրենսդիրը առանձնացնում է ապացուցման երկու մեծ բլոկ՝ արդյոք անձը կատարել է իրեն մեղսագրվող արարքը, կամ արդյոք անձը մեղավոր է: Եթե նախորդ հարցի պատասխանը դրական է, ապա դատարանը պետք է քննարկի ևս մեկ հարց՝ ի՞նչ պատիժ է անհրաժեշտ ընտրել անձի նկատմամբ՝ հաշվի առնելով քրեադատավարական և քրեաիրավական սկզբունքները: Կարծում ենք, որ սա հենց այն լրացուցիչ հարթակն է, որտեղ պաշտպանը պետք է ակտիվ մասնակցություն ունենա ապացուցմանը: Մասնավորապես՝ օրենսդիրը նախատեսել է որոշակի «դատավարական պատենշ» մեղավորության և պատասխանատվության հարցերի միջև:

10. Լրացուցիչ դատալսումներում «դատավարական պատենշի» ամրագրումը դրական նորույթ է, սակայն դրա ամբողջական կյանքի կոչումը ենթադրում է հաջորդ անհրաժեշտ քայլի կատարումը: Կարծում ենք՝ ապացույցների այն հատվածը, որը վերաբերում է անձի բնութագրին, չպետք է անգամ մասնակի հետազոտման առարկա դառնա հիմնական դատալսումների փուլում: Այլ կերպ՝ անկախ հանգամանքից՝ անձի բնութագիրը դրական է, թե բացասական, պետք է հասանելի դառնա դատարանին միայն լրացուցիչ դատալսումների փուլում՝ կանխելով կանխակալ մոտեցման ձևավորումը: Հետևաբար՝ ապացուցման այս գործընթացում պաշտպանը պետք է կատարի անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ նախ բացառելով անձը բնութագրող ապացույցների հետազոտումը առավել վաղ վարույթային փուլերում, ապա՝ հավաքելով և դատարանին ներկայացնելով անձի բնավորությունը, հասարակական դերը, հեղինակությունը և առհասարակ վերջինիս ամբողջական բնութագիրը: Այս կապակցությամբ, առաջարկվում է օրենսդրական փոփոխություններ իրականացնելու միջոցով ներդնել «երկու ծրարների» կառուցակարգը, որը կերաշխավորի, որ մինչդատական վարույթի փուլից դատաքննության անցնելիս անձը բնութագրող և վերդիկտի կայացման համար նշանակություն ունեցող ապացույցները դատարանին ներկայացվում են առանձնացված

կերպով:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Լ. Հովհաննիսյան, «Participation of the defender in preliminary hearings: several issues», «Պետություն և իրավունք», թիվ 2 (96), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2023, 218-225 էջեր:

2. Լ. Հովհաննիսյան, «Examination and resolution of the issue of admissibility of evidence in preliminary hearings as a guarantee of the principle of adversarial proceeding», «Պետություն և իրավունք», թիվ 3 (97), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2023, 151-159 էջեր:

3. Լ. Հովհաննիսյան, «Preliminary hearings in the criminal procedure of the Republic of Armenia: importance, challenges, and prospects for reform», «Պետություն և իրավունք», թիվ 2 (99), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2024, 144-151 էջեր:

4. Լ. Հովհաննիսյան, «Մեղադրանքի պարզաբանման և նոր ապացույցների ներկայացման հիմնահարցերը նախնական դատախոսների փուլում», «Բանբեր Արդարադատության ակադեմիայի», թիվ 3 (13), Երևան, 2024, 64-73 էջեր:

5. Լ. Հովհաննիսյան, «Պաշտպանի դատավարական կարգավիճակի որոշ առանձնահատկությունները քրեական դատավարությունում», «Գիտական Արցախ», թիվ 1 (24), Երևան, «Արցախ» հրատարակչություն, 2025, 77-87 էջեր:

6. Գ. Ղազինյան, Լ. Հովհաննիսյան, «Prerequisites for effective defense implementation during the trial phase», «Պետություն և իրավունք», թիվ 100, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2025, 38-49 էջեր:

7. Գ. Ղազինյան, Լ. Հովհաննիսյան, «The purposes and challenges of supplementary hearings in the Criminal Procedure Code of the Republic of Armenia», «Պետություն և իրավունք», հատուկ թողարկում, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2025, 5-16 էջեր:

УЧАСТИЕ ЗАЩИТНИКА В ПРОЦЕССЕ ДОКАЗЫВАНИЯ В СУДЕ ПЕРВОЙ ИНСТАНЦИИ

Диссертация посвящена участию защитника в процессе доказывания в суде первой инстанции Республики Армения. Актуальность исследования обусловлена тем, что действующий Уголовно-процессуальный кодекс РА по-новому выстроил судебное разбирательство: выделены три самостоятельные подстадии (предварительные, основные и дополнительные судебные слушания), а также впервые предложен процессуальный «барьер» между вопросами виновности и наказания. Эти структурные изменения неизбежно трансформировали и доказывание в суде, что требует переосмысления роли защитника, гарантий его эффективного участия и практических механизмов реализации права на защиту.

Цель диссертации заключается в выявлении проблем, возникающих при участии защитника в доказывании в суде первой инстанции, и в разработке теоретико-практических решений, направленных на нейтрализацию пробелов и противоречий в национальном регулировании. Объектом исследования выступает участие защитника в доказывании как комплексный институт, обеспечивающий практическую реализацию права на защиту и справедливое судебное разбирательство в каждой из трёх подстадий судебного разбирательства.

Научная новизна работы состоит в том, что она представляет собой первое комплексное исследование участия защитника в доказывании на стадии судебного разбирательства, с анализом уже возникающих и потенциально возможных проблем правоприменения и с предложением вариантов их разрешения. В диссертации обосновывается, что эффективное участие защитника предполагает не только позитивные и негативные обязанности процессуальных органов, но и адекватную профессиональную оценку защитником ресурсов, рисков и организационных возможностей принятия защиты; предлагается закрепить соответствующую обязанность и обязанность уведомления доверителя при изменении обстоятельств.

Сформулированы предложения по совершенствованию регулирования:

(i) обеспечить процессуальную возможность получения разъяснённого обвинения именно на предварительных слушаниях при наличии ходатайства стороны защиты; (ii) установить подход, при котором ходатайства, заявленные на предварительных слушаниях, должны рассматриваться и разрешаться без отложения, а при невозможности разрешения в рамках данной подстадии — подлежат отклонению ввиду концептуального назначения предварительных слушаний; (iii) прямо предусмотреть возможность представления новых доказательств на предварительных слушаниях, исходя из значимости доказательственных вопросов и рисков утраты доказательств; (iv) укрепить «барьер» между виновностью и наказанием, исключив преждевременное раскрытие материалов, относящихся к характеристике личности и индивидуализации наказания, посредством, в частности, механизма «двух конвертов». Результаты исследования могут быть использованы при внесении изменений в уголовно-процессуальное законодательство и в практике применения новых процедур суда первой инстанции, а также в профессиональной подготовке специалистов.

По каждому из упомянутых вопросов предметом исследования стали проблемы, возникающие на практике, точки зрения в теоретической литературе, ряде международных документов, прецедентных решениях отечественных и международных судов, которые послужили основанием для внесения автором предложений по соответствующим изменениям в законодательстве.

LUSINE HOVHANNISYAN

**THE DEFENCE COUNSEL'S PARTICIPATION IN THE EVIDENTIARY
PROCESS BEFORE THE COURT OF FIRST INSTANCE.**

This dissertation examines the participation of the defence counsel in the evidentiary process before the court of first instance in the Republic of Armenia. The topic is particularly relevant in light of the conceptual redesign of the Armenian Criminal Procedure Code, which separated the trial into three autonomous stages (preliminary, main and supplementary hearings) and, for the first time, introduced a procedural “barrier” between the issues of guilt and sentencing. These structural innovations have reshaped the dynamics of proof at the trial stage and call for a re-assessment of the defence counsel’s role, the guarantees of effective participation, and the practical tools required to implement the right to defence within each sub-stage of the proceedings.

The purpose of the research is to identify and explain the key difficulties arising from defence participation in proof in the court of first instance and to propose doctrinally grounded and practically workable solutions aimed at eliminating legislative gaps and inconsistencies. The object of the study is the defence counsel’s participation in the evidentiary process as a complex institution that serves as a guarantee for the practical realisation of the right to defence and the protection of fundamental rights and freedoms in trial proceedings, across preliminary, main, and supplementary hearings.

The dissertation’s scientific novelty lies in presenting the first comprehensive research devoted specifically to defence participation in proof at the trial stage, combining analysis of emerging judicial practice with the assessment of foreseeable doctrinal and practical challenges and offering options for their resolution. The research substantiates that effective defence participation requires not only positive and negative obligations of the procedural authorities, but also proportionate professional diligence by the individual lawyer, including an assessment of resources, risks, organisational capacity, and ethical “internal compass”; it further proposes to introduce an explicit duty to ensure the availability of such resources prior to accepting the defence and to inform the client where circumstances materially change.

On this basis, the dissertation advances a set of targeted legislative and procedural proposals: (i) to ensure a clear mechanism - within preliminary hearings and upon a defence motion - for obtaining a genuinely clarified charge through an active question-and-answer format, rather than a mere rereading of the indictment; (ii) to design preliminary-hearing motion practice so that motions filed at this stage are examined and decided without postponement, and where resolution is impossible within the preliminary-hearing framework, the motion should be refused in line with the conceptual function of this sub-stage; (iii) to expressly allow the submission of new evidence during preliminary hearings, given the centrality of evidentiary matters and the practical risks of loss or destruction of evidence; and (iv) to strengthen the guilt/sentencing “barrier” by preventing premature disclosure of materials relating to the defendant’s personal characteristics and sentencing individualization, *inter alia* through a “two-envelopes” model, so as to reduce the risk of pre-judgment on guilt. The findings are intended to support future amendments to Armenian criminal procedure, facilitate consistent application of the new trial architecture, and contribute to professional training and capacity building.

The Author examined the practical issues, academic literature, several international regulations, precedents of domestic and international courts pertaining to each of the mentioned questions, which served as a ground for the Author’s recommendations for respective legal amendments.